

Ծնողական ժողով

Թեմա՝ «Ապահով համացանց»

Վաղարշապատի Մ. Գորկու անվան հմ 5 ավագ դպրոց

Անուշ Վահրիչի Գրիգորյան

Մասնակիցներ՝ սոցիալական մանկավարժների թիմ, ծնողական խորհրդի անդամներ, ինֆորմատիկայի ուսուցչուհի, աշակերտներ:

Նպատակը՝ ծնողներին ծանոթացնել համացանցի հնարավորություններին, նրա դրական և բացասական կողմերին, սովորեցնել ապահով օգտվել համացանցից, արդյունավետ կիրառել համացանցի անսահմանափակ հնարավորությունները, ներկայացնել գործնական խորհուրդներ երեխաների համար համացանցը առավել ապահով դարձնելու համար:

Ընթացքը: Փուլ 1

Լսարանի տեղեկացվածության աստիճանի մասին պատկերացում կազմելու համար կազմակերպվում է մտազրոհ ներքևում նշված հարցերի շուրջ:

Մտազրոհ.

- Ի՞նչ է համացանցը:
- Ի՞նչ գիտեք համակարգչային վիրուսների մասին:
- Արդյոք գիտե՞ք վիրուսներից պաշտպանվելու կանոնները:
- Ծանո՞թ եք ինտերնետից օգտվելու անվտանգության կանոններին:

Սահիկաշարի միջոցով աշակերտներն իրենց ծնողներին են ներկայացնում սեփական ուսումնասիրությունները համացանցի, վիրուսների, ՀՀ օրենսգրքում տեղ գտած հոդվածների մասին:

Արդեն տեղեկատվական պաշարով հարուստ լսարանին ուսուցիչը ներկայացնում է վտանգների դեմ պայքարելու միջոցները՝ ամրապնդելով այդ հմտությունները գործնական աշխատանքների միջոցով: Վերջիններս ներառում են հետևյալ թեմաները.

- Պաշտպանության կոմպլեքս համակարգի տեղադրում

Հակավիրուսի տեղադրումը դա անցյալ է, հարկավոր է տեղադրել պաշտպանության կոմպլեքս համակարգ , որն իր մեջ ներառում է հակավիրուս , ֆայրվոլ, հակասպամ, ֆիլտրեր և ևս մի քանի մոդուլներ պաշտպանության համար: Յուրաքանչյուր օր նոր վիրուսներ են հայտնվում, դրա համար հարկավոր է անընդհատ թարմացնել հակավիրուսը, կամ դնել ավտոմատ թարմացման ռեժիմում:

- Windows օպերացիոն համակարգի թարմացում

Նոր տարբերակները նոր հնարավորություններ են տալիս վիրուսների հարձակումներից պաշտպանվելու համար:

- Էլ-փոստի և SMS հաղորդագրություններում հանդիպող վտանգավոր հղումները և դրանցում ներկայացվող վտանգը :

Հանդիպում են կայքեր, որոնք փակում են ձեր էջը և բացելու համար պահանջում են SMS հաղորդագրություններ ուղարկել, դա ձեզանից կլիլի որոշակի գումար և դեռ վիրուս էլ կուղարկի:

Խորհուրդներ

- Օգտվեք լիցենզավորված ծրագրերից: Որքան հայտնի է ծրագիրը, այնքան հավանական է, որ այն վիրուսակիր է:
- Օգտագործեք «բրանդմաուեր»-դրանք թույլ չեն տալիս , որ համակարգիչ մուտք գործեն «որդեր», վիրուսներ, վտանգավոր ծրագրեր:
- Օգտագործեք բարդ գաղտնաբառեր:
- Ծածկագրերի 80%-ը պարզ են: Լավ կլինի դրանք պարունակեն 7-12 սիմվոլ: 5 սիմվոլից բաղկացած ծածկագիրը կարելի է բացել 2-4 ժամում, իսկ 7 սիմվոլից բաղկացած ծածկագիրը հնարավոր է բացել 2-4 տարում: Լավ կլինի օգտագործել տարբեր ռեզիստորների տառեր, թվեր, նշաններ:
- Կատարեք լրացուցիչ պատճեններ: Պատճենները պահեք արտաքին կրիչների վրա:

Փուլ 2

Հայաստանի Հանրապետությունում ինչ օրենքներով ենք մենք պաշտպանվում:

Ինտերնետ համացանցի զարգացումն իր հետ բերեց կիբերհանցավորության դրսևորումների որակապես նոր փուլ: Տարբեր ինտերնետային չարագործներ սկսեցին ստեղծել և տարածել վիրուսների տարատեսակներ՝ «որդեր-Worm», որոնք վարակում և գաղտնի հասանելիություն էին ապահովում «կոտրված» համակարգչին: Նմանանատիպ համակարգիչները կարող են միացվել միասնական ցանցի մեջ և դառնալ «բոտնետներ», ինչը հնարավորություն է տալիս չարագործներին կազմակերպել կիբերհարձակումներ / DDoS/ տիպի կազմակերպությունների կամ հետաքրքրող համակարգչային ցանցերի վրա, արժեքավոր տեղեկատվություն ստանալու նպատակով:

ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ գլուխը պատիժ է սահմանում այն բոլոր տեսակի հանցագործությունների համար, որոնցով կարող է վտանգվել տեղեկատվական համակարգերի անվտանգությունը: Մասնավորապես, տվյալ գլխում նկարագրված

հանցագործության տեսակները, որոնց համար սահմանված է պատժաչափեր, հետևյալն են՝

Հոդված 251. Համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ներթափանցելը),

Հոդված 252. Համակարգչային տեղեկատվությունը փոփոխելը,

Հոդված 253. Համակարգչային սաբոտաժը,

Հոդված 254. Համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը,

Հոդված 255. Համակարգչային տեղեկատվությունն ապօրինի մուտք գործելու (ներթափանցելու) համար հատուկ միջոցներ պատրաստելը կամ իրացնելը,

Հոդված 256. Վնասաբեր ծրագրեր մշակելը, օգտագործելը և տարածելը,

Հոդված 257. Համակարգչային համակարգը կամ ցանցը շահագործելու կանոնները խախտելը:

Այս հոդվածներում նկարագրված հանցակազմերը առավելագույնս ներառել են իրենց մեջ համակարգչային տեղեկատվության դեմ կատարվող հանցագործությունների տեսակները, սակայն չի կարելի մոռանալ տեխնիկական առաջընթացի սրնթաց տեմպերի մասին, այդ իսկ պատճառով օրենսդիրի և իրավակիրառի կապը անչափ կարևոր է տվյալ տեսակի հանցագործությունների արդյունավետ բացահայտման համար: Այս ամենին զուգընթաց՝ կարևորվում են միջազգային համագործակցությունը, քանի որ կիրբերհանցագործությունների վերջին տարիների զարգացման միտումների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարեցտարի ավելանում են անդրսահմանային բնույթ կրող հանցատեսակները: Այսպես՝

համակարգչային հարձակում կազմակերպող չարագործը կարող է գտնվել որևէ եվրոպական երկրում, օգտագործել որևէ ասիական երկրում վարակված համակարգիչների խումբ և գրոհ կազմակերպել լատինոամերիկյան որևէ պետությունում գտնվող իրեն հետաքրքրող համակարգչային համակարգի վրա, որի արդյունքում հնարավոր կլինի հափշտակել գումարներ չորրորդ երկրում գտնվող բանկից: Նմանատիպ հանցատեսակները վերջին տարիներին լայն տարածում են ստացել ամբողջ աշխարհում: Վերը նշվածին հարկ է ավելացնել նաև ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածները, որոնք առավել հաճախակի կատարվում են համակարգչային տեղեկատվական համակարգերի օգնությամբ կամ դրանց օգնությամբ:

Հոդված 181. Հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ,

Հոդված 144. Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը

Հոդված 137. Մպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը,

Հոդված 140. Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը,

Հոդված 166. Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, Հոդված 263. Պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելը:
Կիրերհանցագործությունը սահմաններ չի ճանաչում, այն պետք է պաշտպանվի միջազգային օրենքներով:

Փուլ 3: Ակտիվացնող վարժանք:

Ուսուցչի կողմից ներկայացվում է , թե համացանցից օգտվելիս անվտանգության ինչ կանոններ է անհրաժեշտ պահպանել.

I-կանոն Ցանկալի չէ անձնական ինֆորմացիան տեղադրել համացանցում:

II-կանոն Չպատասխանել էլեկտրոնային փոստով եկող անձանոթ նամակներին:

III-կանոն Եթե դուք հրապարակում եք Ձեր նամակները կամ տեսաֆիլմը-հիշեք, որ այն կարող է օգտագործել յուրաքանչյուր ոք իր նպատակների համար:

IV-կանոն Անձանոթների հետ ընկերություն մի հաստատեք տարբեր սոցիալական կայքերում:

V-կանոն Օգտագործեք գաղտնաբառեր, որոնք կպարունակեն ն' թվեր, ն' տառեր, ն' սիմվոլներ:

VI-կանոն Համակարգչի հետ աշխատանքը կանոնակարգեք:

VII-կանոն Օգտագործեք լիցենզիոն ծրագրեր, հակավիրուսային ծրագրեր, որոնք էլ ժամանակին թարմացրեք:

VIII-կանոն Մի պահպանեք Ձեր գաղտնաբառը այն համակարգիչների վրա, որոնցից շատ մարդիկ են օգտվում: Գաղտնի ինֆորմացիան մի պահպանեք ուսումնական կենտրոններում, աշխատավայրի համակարգիչներում:

IX-կանոն Միայնակ մի' հանդիպեք այն մարդկանց հետ, ում հետ, որ ծանոթացել եք ինտերնետով:

X-կանոն Մի բացեք անձանոթներից ստացված ֆայլերը:

XI-կանոն Հաղորդակցվելիս պահպանեք ցանցից օգտվելու էթիկայի կանոնները:

XII-կանոն Վեբ-տեսախցիկը օգտագործելիս հետևեք, որ օտար մարդիկ չտեսնեն, կամ չլսեն այն, քանի որ կարող են ձայնագրել և օգտագործել տարբեր նպատակներով:

Ծնողները կանգնում են շրջանաձև, իսկ կենտրոնում ուսուցիչն է: Վերջինս նետում է գնդակը ծնողներից մեկին, ով, բռնելով գնդակը, ասում է որևէ կանոն և փոխանցում գնդակը մյուս ծնողին, ով ևս պետք է վերհիշի անվտանգության կանոններից մեկը. այսպես շարունակ, մինչև շրջանի փակվելը:

Փուլ 4: Համակարգչային կախվածությունը. ինչպես է ձևավորվում այն:

Մարդու ուղեղն ունի հաճույքի կենտրոններ, որոնց գործունեությունը թույլ է տալիս մոռանալ իրականության մասին: Համակարգչային կախվածությունն առաջանում է աստիճանաբար, հետագայում, երբ մարդուն երկու ժամով զրկում են համակարգչից, նա թմրամոլի կամ հարբեցողի նման ունենում է «ժուժկալության համախտանիշ»:

Գոյություն ունեն համակարգչից հոգեբանական կախվածության հետևյալ ձևերը՝

- համացանցից կախվածություն. անձը ստեղծում է վիրտուալ ծանոթություններ և շփումներ, հաճախակի ստուգում էլեկտրոնային փոստը, այցելում երաժշտական ցանցեր և այլն, աստիճանաբար ավելացնելով ցանցում գտնվելու ժամանակը, որի հետևանքով վատնում է ավելի շատ գումար,
- համակարգչային խաղերից կախվածություն:

Ըստ խաղի բնույթի, կարելի է բաժանել դերային՝ իրականությունից առավելապես կտրված, ոչ դերային՝ նպատակին հասնելու, հաղթելու մոլուցք, հավաքելու համար առավելագույն միավորներ, համակարգչային խաղեր:

Համակարգչային խաղերից կախվածության հիմնական նշաններն են՝

- համակարգչով աշխատելու ընթացքում տրամադրության բարձրացում,
- համակարգչից կամ խաղից կտրվելու անկարողություն, իսկ կտրվելու դեպքում՝ ագրեսիայի հասնող դյուրագրգիռ վիճակի առաջացում,
- տնային գործերի անտեսում,
- մարդկանց հետ շփվելիս առավելապես համակարգչի հետ կապված թեմաների քննարկում,
- հրաժարում ընկերների հետ շփումից:

Համակարգչային կախվածության հետևանքով կարող է վտանգվել նաև երեխաների և պատանիների առողջությունը՝ օրգանիզմի դիմադրողականությունը նվազում է, առաջանում են տեսողության խանգարումներ, գլխացավեր, ողնաշարի, դաստակի ցավեր, հոգնածություն, անքնություն և այլն:

Համակարգչային կախվածություն ունեցող դեռահասների համար դժվարին կենսական իրավիճակների հաղթահարումը, որպես կանոն, ընթանում է առճակատմամբ, ընտանիքից, շրջապատից մեկուսանալով, խուսափողական տարաբնույթ բացատրություններով:

Լսարանին առաջարկում է թեստ, որով կարող ենք պարզել, ունե՞ք, արդյոք, համակարգչային կախվածություն, թե՞ ոչ:

/Հեղինակ՝ Խաչատուր Գասպարյան (Միխիթար Հերացու անվան ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ)/

Պատասխան՝ երբեք՝ 1, երբեմն՝ 2, հաճախ՝ 3, շատ հաճախ՝ 4 միավոր:

- Նստելով համակարգչի առջև կամ ցանցում գտնվելիս որքա՞ն հաճախ եք ակտիվանում, թեթևանում և բավականություն ստանում:
- Որքա՞ն հաճախ եք համակարգչի աշխատանքը ինքնուրույն դադարեցնում կամ ցանցից դուրս գալիս:
- Որքա՞ն հաճախ եք նյարդայնանում, տխրում կամ դատարկություն զգում առանց համակարգչի կամ ցանցի:
- Տրամադրության բարելավման կամ կյանքի դժվարություններից խուսափելու համար որքա՞ն հաճախ եք պահանջ զգում համակարգչի առջև վերադառնալու կամ ցանցում գտնվելու համար:
- Համակարգչով աշխատելու կամ ցանցում գտնվելու պատճառով որքա՞ն հաճախ եք խուսափում ընտանեկան, հասարակական, աշխատանքային կամ ուսանելու պատասխանատվությունից:

- Որքա՞ն հաճախ եք ստում, երբ հարցնում են համակարգչի առջև անցկացրած ժամանակի վերաբերյալ:
- Որքա՞ն հաճախ եք ձեռքերի կամ դաստակների թմրածություն, գլխացավ, ողնաշարի ցավ, տեսողական խնդիրներ ունենում, կամ ժամանակը խնայելու նպատակով սնվում համակարգչի առջև նստած:
- Որքա՞ն հաճախ է խանգարվում քնի ռեժիմը, քանի որ աշխատում եք համակարգչով կամ գտնվում ցանցում:

Եթե հավաքել եք 0-14 միավոր՝ համակարգչային կախվածության վտանգ չկա, 15-20 միավոր՝ տարված եք համակարգչով, 21-26 միավոր՝ համակարգչային կախվածության վտանգը մեծ է, 27- 32 միավոր՝ առկա է համակարգչային կախվածություն:

Ամփոփում:

Հանդիպման ավարտին ծնողներին տրվում է սոցիալական մանկավարժների կողմից նախապես պատրաստված հարցաթերթիկ, որի միջոցով «գնահատվում է» հանդիպան արդյունավետությունը: